

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Բնական ռեսուրսներ: Ընդհանրապես ռեսուրս է այն ամենը, ինչը մարդկանց անհրաժեշտ նյութական ու հոգևոր բարիքների ստացման աղբյուր և նախադրյալ է: Այդպիսի աղբյուր ու նախադրյալ են մեզ շրջապատող բնության բազմաթիվ նյութեր ու երևույթներ՝ օգտակար հանածոները, անտառի հարստությունները, վարելահող ու մարգագետինը, գետերն ու լճերը, քամին ու անձրևը, արևի լույսն ու ջերմությունը:

Բնական ռեսուրսները բնական միջավայրի այժմ նյութերն ու երևույթներն են, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես աշխատանքի առարկա ու գործիք (արտադրության միջոց) և սպառման առարկա: Գիտության ու տեխնիկայի զարգացման շնորհիվ արագորեն ավելանում է ոչ միայն օգտագործվող բնական ռեսուրսների տեսականին, այլև նույն ռեսուրսի օգտագործման բնագավառները և ծավալը: Արագ է աճում հանքատեսակների և համաշխարհային օվկիանոսի ձկնային ռեսուրսների օգտագործումը: Լայն տարածում ունի ***բնական ռեսուրսների դասակարգումը սպառվողների և չսպառվողների:***

Չսպառվող բնական ռեսուրսներ են, օրինակ, արեգակնային էներգիան, ծովային ալեկոծությունների, տեղատվության ու մակընթացության էներգիան:

Մնացած բոլոր ռեսուրսները ***սպառվող*** են: Բայց դրանց մեջ տարբերում են այնպիսիները, որոնք որոշակի ժամանակաշրջանում վերականգնվում են, և այնպիսիները, որոնք չեն վերականգնվում և օգտագործելու դեպքում կարող են սպառվել ամբողջովին, օրինակ՝ օգտակար հանածոները:

Վերականգնվող ռեսուրսներ են, օրինակ, բույսերը, կենդանիները, գետերի ու լճերի ջրային պաշարները: Դրանք այն ռեսուրսներն են, որոնք գոյանում են մեզ արդեն հայտնի նյութի շրջապատույթի շնորհիվ և ունեն ցիկլային

զարգացում: Բուսական ու կենդանական ռեսուրսները վերականգնվում են նյութի կենսաբանական շրջապտույտի, իսկ ջրային ռեսուրսները՝ ջրի շրջապտույտի շնորհիվ:

Այդ ռեսուրսները տարբերվում են նաև ոչ միայն ծագումով, հատկանիշներով և այն դերով ու տեղով, որ ունեն աշխարհագրական միջավայրում և մարդու կյանքում:

Երկրի վրա դրանք տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ և տարբեր ռեզիդեններում տարբեր արժեք ունեն:

Կարևոր է գիտենալ նաև բնական ռեսուրսների դասակարգումն ըստ **օգտագործման եղանակի**: Առանձնացնում են երկու խումբ, առաջին՝ ռեսուրսներ, որոնք օգտագործվում են որպես **արտադրամիջոց**, երկրորդ՝ ռեսուրսներ, որոնք օգտագործվում են որպես **սպառման առարկա**:

Նախորդ դասակարգման բոլոր խմբերը կարող են ծառայել կամ ուղղակիորեն որպես արտադրամիջոց, այսինքն՝ աշխատանքի առարկա ու գործիք, կամ որպես դրանց ստացման աղբյուրներ:

Անհամեմատ սահմանափակ են երկրորդ խմբի մեջ մտնող ռեսուրսները: Դրանք հիմնականում սննդի մեջ օգտագործվող ռեսուրսներն են՝ խմելու ջուր, ձկները, որսի մսատու կենդանիները, սնկերը, վայրի հատապտուղները, ուտել բույսերը, հանքային ջուրը:

Մի ուրիշ **դասակարգման համաձայն** բնական ռեսուրսները բաժանվում են **փոխարկեփի և անփոխարկելի**: Օրինակ՝ մարդկանց, կենդանիների ու բույսերի շնչառության համար անփոխարկելի է մթնոլորտի թթվածինը, խմելու քաղցրահամ ջուրը: Բայց բավական շատ են բնական ռեսուրսների այն տեսակները, որոնք կարելի է փոխարինել այլ բնական ռեսուրսներով կամ արհեստական նյութերով: Գիտության ու տեխնիկայի զարգացման հետ դրանց թիվը մեծանում: Փոխարկելի ռեսուրսներից է մետաղը (կարող է փոխարինվել պլաստմասայով, ձուլվածքաքարով), փայտանյութը (պլաստիկատով), բնական

կաշին ու մորթին (արհեստական կաշվով ու մորթով), բնական թելերը (արհեստական թելերով):

Բնական պայմաններ: Արդեն գիտեք, որ բնության տարրը ռեսուրս է, եթե մասնակցում է կամ կարող է մասնակցել արտադրության պրոցեսին որպես աշխատանքի առարկա ու գործիք կամ սպառման առարկա: Շատ են այն դեպքերը, երբ բնության տարրը չմասնակցելով արտադրության պրոցեսին՝ մեծապես ազդում է (կամ կարող է ազդել) հասարակական կյանքի զարգացման վրա: Այդ դեպքում այն հանդես է գալիս որպես պայման: Օրինակ՝ մթնոլորտային ճնշումը, երկրի ձգողական ուժը, եղանակը, երաշտը, սառնամանիքը, փոթորիկը:

Նշենք միաժամանակ, որ բնական ռեսուրսի և բնական պայմանի միջև անանցանելի սահման գոյություն չունի, այդ սահմանը պայմանական է:

Բնական միջավայրի նույն տարրը միաժամանակ կարող է լինել թե՛ ռեսուրս, և թե՛ պայման: Այդպիսին է, օրինակ, բնատարածքը, որն իր վրա է կրում մարդուն, ինչպես նաև այն ամենը, ինչ ստեղծված է մարդու և բնության կողմից: Բնատարածքը հատուկ տեսակի բնական ռեսուրս է, առանց որի մարդկային հասարակությունը գոյություն ունենալ չի կարող:

Բայց բնատարածքը նաև բնական պայման է: Պայման է, որովհետև կախված որակից՝ այն տարբեր ազդեցություն է ունենում արտադրության վրա: Դա կախված է նրանից, թե այն լեռնո՞ւտ է, թե՞ հարթավայրային, լանջերը զառիթափ են, թե՞ մեղմաթեք, ինչպիսի՞ն է բացարձակ բարձրությունը, լանջերի կողմնադրությունը և այլն:

Միաժամանակ և՛ բնական ռեսուրս, և՛ բնական պայման են նաև կլիման, մանրէները, մթնոլորտի ու ջրավազանների ջուրը և այլն:

Եթե խոսքը բնության առանձին տարրի մասին է, ապա բարդ խնդիր չէ ամեն մի կոնկրետ դեպքում պարզել դրա ռեսուրս կամ պայման լինելը: